



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Մասնագիտության կրթական  
ծրագրի արտոնման,  
փորձաքննության և  
հաստատման կանոնակարգ**

ԵՐԵՎԱՆ 2014

Մասնագիտության կրթական ծրագրի արտոնման, փորձաքննության և հաստատման կանոկարգը մշակվել է Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում 2013 թ. սեպտեմբերի 5-ին «Կրթական ծրագրերի» ԾԻԳ-ի և ՀԱԱՀ հիմնադրամի միջև դրամաշնորհային պայմանագրով իրականացվող «ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ» ծրագրի գործողությունների պլանի համաձայն ստեղծված ժամանակավոր հանձնաժողովի կողմից:

Հաստատված է

ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից

07.02.2014 թ. (արձանագրություն № 6)

## Բովանդակություն

Օգտագործված գրականություն.....	4
Ընդհանուր դրույթներ .....	5
ՀԱԱՀ կրթական ծրագրի մշակման, վերամշակման և խոշորացման արտոնումը .....	6
ՀԱԱՀ կրթական ծրագրերի փորձաքննությունը և հաստատումը .....	10
Հավելված 1` .....	13
Նոր կրթական ծրագրերի ստեղծման հայտի ձևաթերթ .....	13
Հավելված 2` Նոր կրթական ծրագրեր, առարկաներ և մոդուլներ մշակելու և հաստատելու ընթացակարգեր.....	16

## Օգտագործված գրականություն

ԳԽ – գիտական խորհուրդ

ՀԱԱՀ – Հայաստանի ազգային ազրարային համալսարան

ՄԽ – մեթոդ խորհուրդ

ՄԿԾ – մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿԾՊ – մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու

ԾՀՓՓ – ծրագրի հաստատման փաստաթղթային փաթեթ

ՈԻՄԿ – ուսումնամեթոդական կենտրոն

ԿԲՌՊՈՎԻ Բաժին – կրթության բարելավման ռազմավարական պլանավորման  
և ինքնավերլուծության բաժին

ՈԱ – որակի ապահովման

## Ընդհանուր դրույթներ

Սույն կանոնակարգը ՀԱԱՀ-ում կարգավորելու է բակալավրի և մագիստրոսի պատրաստման ՄԿԾ-ների հաստատման գործընթացը, որն իր հերթին ենթադրում է հետևյալ ենթագործընթացները.

- Ծրագրի մշակման կամ վերամշակման արտոնման
- Ծրագրի փաստաթղթային փաթեթի ստեղծում և ծրագրի առաջարկի փորձաքննություն,
- Փորձաքննության եզրակացությունների կատարում և ծրագրի հաստատում:

Կարգը սահմանում է ՀԱԱՀ ՄԿԾ-ների արտոնման, փորձաքննության և հաստատման գործընթացների նպատակները և խնդիրները, դրանց ներկայացվող պահանջները, կիրառվող ընթացակարգերը և համապատասխան ժամանակացույցերը:

Կարգում տրվում են ծրագրի հաստատման փաստաթղթային փաթեթի կազմը, ինչպես նաև ՀԱԱՀ ԳԽ-ում արդեն հաստատված Նոր կրթական ծրագրի ստեղծման ձևաթերթը:

ՄԿԾ-ների արտոնման, փորձաքննության և հաստատման գործընթացները ՀԱԱՀ ՄԿԾ-ների ՈԱ մեխանիզմներ են: ՀԱԱՀ բոլոր նոր ստեղծվող, խոշորացված և վերամշակված ՄԿԾ-ները պետք է անցնեն հաստատման գործընթաց՝ սկսած 2015-2016 ուստարվանից:

Նոր ՄԿԾ-ներ ստեղծման, խոշորացման, վերամշակման առաջարկները ներկայացնում են ՀԱԱՀ ուսումնական ստորաբաժանումները (ֆակուլտետ, կենտրոն):

## **ՀԱԱՀ կրթական ծրագրի մշակման, վերամշակման և խոշորացման արտոնումը**

Արտոնումը համալսարնի պաշտոնական համաձայնությունն է ուսումնական ստորաբաժանմանը (ֆակուլտետին, կենտրոնին)՝ սկսելու կամ նոր կրթական ծրագրի մշակման գործընթացը, կամ հին ծրագիրը վերամշակելու գործընթացը, կամ հին ծարգրերը խոշորացնելու գործընթացը՝ ներկայացված առաջարկությանը համապատասխան:

**Արտոնման գործընթացի նպատակն է** գնահատել ներկայացված առաջարկության հիմնավորումը և դրա համապատասխանությունը ծրագրերի հաստատման ՀԱԱՀ պահանջներին/չաձանիշներին:

### **Գործընթացի խնդիրներն են.**

- նոր ՄԿԾ-ի մշակման ժամանակ հիմնավորել, որ առաջարկվող ՄԿԾ-ն նպատակահարմար է իրականացնել ՀԱԱՀ տվյալ ուսումնական ստորաբաժանումում, վերլուծել առաջարկության իրագործելիությունը ՄԿԾ-ի թիմի՝ ծրագիրը մշակելու փորձագիտական կարողության տեսանկյունից,
- ՄԿԾ-ի վերամշակման արտոնման ժամանակ, հիմնավորել, որ առաջարկվող վերամշակումը անհրաժեշտ է իրականացնել տվյալ ՄԿԾ-ի հետագա գործառնության արդյունավետությունը բարելավվելու ակնկալիքով, ինչպես նաև վերլուծել առաջարկության իրագործելիությունը,
- ՄԿԾ-ի խոշորացման դեպքում, անհրաժեշտ է հիմնավորել առկա մասնագիտությունների միավորման անհրաժեշտությունը, վերլուծել առաջարկության իրագործելիությունը,
- սահմանել նոր մշակվող, կամ վերամշակվող կամ խոշորացվող ՄԿԾ-ի ռեսուրսային ապահովվածության (նյութական և մարդկային) նախնական գնահատականը և բացահայտել լրացուցիչ ռեսուրսների անհրաժեշտությունը,
- բացահայտել նոր մշակվող, կամ վերամշակվող կամ խոշորացվող ծրագրի իրականացման նպատակահարմարությունը շուկայական վերլուծության միջոցով, առաջարկվող ծրագրի մրցակցային առավելությունները և թույլ կողմերը ՀՀ այլ բուհերում իրականացվող համանման ծրագրերի նկատմամբ (եթե կան այդպիսիք):

### **ՄԿԾ-ի ստեղծման առաջարկության հայտը**

Նոր ՄԿԾ ստեղծման, վերամշակման կամ խոշորացման առաջարկությունը ներկայացնում է համապատասխան ուսումնական ստորաբաժանումը

(Ֆակուլտետը, կենտրոնը): ՄԿԾ ստեղծման, վերամշակման կամ խոշորացման առաջարկությունն արտոնման ներկայացվում է ֆակուլտետի (կենտրոնի) խորհրդի որոշմամբ:

Առաջարկության մշակման և հետագա իրականացման համար համապատասխան ստորաբաժանումը ձևավորում է աշխատանքային խումբ (եթե այն ստեղծվում է, իսկ եթե ՄԿԾ-ն վերամշակվում է կամ խոշորացվում, ապա տվյալ ՄԿԾ-ի պատասխանատուի աշխատանքային խումբն է), որը ձևակերպում է ծրագրի առաջարկի հայտը:

Հայտի մշակման ընթացքում ձևակերպվում է առաջարկվող ՄԿԾ-ի (որակավորման) պրոֆիլը, այսինքն՝ ՄԿԾ-ի ուղղվածությունը և այն առանձնահատուկ նպատակները, որոնք պետք է ձեռք բերվեն դրա իրականացման արդյունքում: Հայտը հիմնավորում է նաև ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային ապահովվածությունը, տալիս պոտենցիալ աշխատաշուկայի նկարագրությունը:

**Առաջարկության մշակման համար հիմք են հանդիսանում.**

- ստորաբաժանման (ֆակուլտետի, կենտրոնի) զարգացման ռազմավարական գերակայությունը
- պոտենցիալ աշխատաշուկայի և գործատուների պահանջարկի ու կարիքների վերլուծությունը, կոնկրետ պատվերով նպատակային ուսուցման հնարավորությունները,
- առաջարկության տնտեսական նպատակահարմարության գնահատականը,
- առաջարկվող ծրագրի մրցակցային դիրքը (առավելություններն ու թույլ կողմերը) ՀՀ այլ բուհերում իրականացվող համանման այլ ծարգերի նկատմամբ (եթե այդպիսիք կան),
- արտաքին՝ ազգային և միջազգային ծրագրային կողմնորոշիչների/չափորոշիչների պահանջները տվյալ մասնագիտության համար,
- ուսումնական ստորաբաժանումում ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ դասախոսական, նյութական, տեղեկատվական և այլ ռեսուրսների առկայությունը:

**Ծրագրի մշակման, վերամշակման և խոշորացման աշխատանքային խումբը**

Նոր ՄԿԾ մշակելու համար ստեղծվում է ՄԿԾ-ի մշակման աշխատանքային խումբ տվյալ մասնագիտական ոլորտից փորձառու դասախոսներ և այլ փորձագետներ: Աշխատանքային խումբը ղեկավարում է ստեղծվող ՄԿԾ-ի պատասխանատուն, որը ներկայացվում է տվյալ ուսումնական

ստորաբաժանման կողմից և հաստատավում է ՀԱԱՀ ԳԽ-ով: Առկա ՄԿԾ-ների վերամշակելու կամ խոշորացնելու համար պատասխանատու է արդեն առկա ՄԿԾ-ների պատասխանատուները և նրանց կից աշխատանքային խումբը:

Եթե տվյալ ՄԿԾ-ն միջմասնագիտական է, ապա ՄԿԾ-ի համար պատասխանատվություն են կրում բոլոր այն ուսումնական ստորաբաժանումները, որոնք առնչվում են նրան, սակայն վարչական պատասխանատվությունը վերապահվում է նրանցից մեկին, սակայն որոշումները իրականացնելիս անհրաժեշտ է նաև մյուս ստորաբաժանումների ղեկավարների համաձայնությունը:

ՄԿԾՊ-ն իր խմբի հետ միասին պատասխանատու է ՄԿԾ-ի առաջարկի հայտի ձևակերպման, ծրագրի հաստատման փաստաթղթային փաթեթի ստեղծման և փորձաքննության եզրակացությունների կատարման հետամուտ լինելու համար:

Համալսարանի ՈՒՄԿ-ի ԿԲՌՊՈՎԻ բաժինը անհրաժեշտ խորհրդատվություն է տրամադրում ՄԿԾ-ին և նրա աշխատանքային խմբին՝ ծրագրի արտոնման և հաստատման համար պահանջվող փաստաթղթերի ցանկի, դրանց բովանդակության և նախապատրաստման վերաբերյալ:

## **Ծրագրի արտոնման գործընթացը**

Արտոնման գործընթացի առաջին քայլը ՄԿԾ-ի առաջարկի հայտի ձևակերպումն է ՄԿԾ պատասխանատուի և նրա խմբի կողմից:

ՄԿԾ-ի առաջարկի հայտը նախ երաշխավորվում է համապատասխան ուսումնական ստորաբաժանման ԳԽ-ում, ապա ներկայացվում է ուսումնական գծով պրոռեկտորի և ՈՒՄԿ տնօրեն-պրոռեկտորի հաստատմանը: Եթե ՄԿԾ-ն միջմասնագիտական է, ապա ստորաբաժանումների ԳԽ-ների միացյալ նիստի արդյունքում է որոշումը հաստատվում:

ՀԱԱՀ ուսումնական գծով պրոռեկտորը ՈՒՄԿ տնօրեն-պրոռեկտորի հետ համատեղ ուսումնասիրում է արտոնման առաջարկի հայտը, ուսումնական ստորաբաժանման երաշխավորագիրը և մշակում արտոնելու վերաբերյալ եզրակացությունը: Եզրակացության արտոնման վերաբերյալ կարող է լինել դրական, դրական պայմանական (որոշակի թերությունների և բացերի թվարկումով) և բացասական:



Եթե եզրակացությունը պայմանական դրական է, ապա ՄԿԾ պատասխանատուն իր խմբի հետ միասին պետք է միջոցներ ձեռնարկի առկա թերությունների և բացերի վերացման ուղղությամբ:

ՀԱԱՀ ոլորտի պատասխանատու պրոռեկտորների հաստատումից հետո համապատասխան ՄԿԾ պատասխանատուն իր խմբի հետ կազմում է ծրագրի հաստատման հետագա գործընթացի ժամանակացույցը:

Եթե ծրագիրը նորաստեղծ է կամ խոշորացվող, ապա արտոնելու դրական որոշումը հիմք է հանդիսանում նաև ՀԱԱՀ-ի կոմից տվյալ ծրագրի լիցենզավորման հայտ ներկայացնելու համար, իսկ լիցենզիայի առկայության դեպքում՝ նաև տվյալ կրթական ծրագրով ընդունելության հայտ ներկայացնելու համար:

## **ՀԱԱՀ կրթական ծրագրերի փորձաքննությունը և հաստատումը**

### **Փորձաքննության և հաստատման նպատակը և խնդիրները**

ՄԿԾ-ի փորձաքննության և հաստատման գործընթացներ նպատակն է գնահատել ՄԿԾ-ի մշակման, վերամշակման որակը և ուսումնական ստորաբաժանման կարողությունը՝ այն իարականացնելու սահմանված կրթական չափորոշիչների և/կամ ծրագրային կողմնորոշիչների համապատասխան:

### **Գործընթացի խնդիրներն են.**

- հաստատել մշակված ՄԿԾ-ի (որակավորման) պրոֆիլի/նպատակների, կրթական վերջնարդյունքների և ուսումնական պլանի բովանդակության համապատասխանությունը, համալսարանի առաքելությանը, բարձրագույն կրթության որակավորումների ազգային հենքին և համապատասխան կրթական չափորոշիչի պահանջներին,
- հավաստիանալ, որ ՄԿԾ-ի մշակմանը, կառուցվածքին ու բովանդակությանը վերաբերող ՀԱԱՀ պաշտոնական փաստաթղթերում սահմանված պահանջները պահպանված են,
- հավանություն տալ ՄԿԾ-ի բաղկացուցիչ դասընթացների կազմին և բովանդակությանը, հավաստիանալ, որ դրանց կրթական վերջնարդյունքները համապատասխանում են ՄԿԾ-ի որակավորման բնութագրիչներին,
- ստուգել, որ ՄԿԾ-ի մշակման արտոնման վերաբերյալ եզրակացությունում նշված թերությունները հիմնականում վերացված են,
- հավաստիանալ, որ առաջարկության հեղինակ ուսումնական ստորաբաժանումն ունակ է իրականացնելու մշակված ՄԿԾ-ն՝ սահմանված կրթական չափորոշիչներին և մատուցման որակի պահանջներին համապատասխան,
- գնահատել նորաստեղծ ՄԿԾ-ի և դրա բաղկացուցիչ դասընթացների մատուցման ռեսուրսային բազայի և ուսումնական ենթակառուցվածքի համապատասխանությունը սահմանված նորմատիվային պահանջներին:

### **Ծրագրային հաստատման փաստաթղթային փաթեթը**

ՄԿԾ-ի հաստատման համար անհրաժեշտ փաստաթղթային փաթեթը ներառում է.

- ՄԿԾ-ի մշակման արտոնման եզրակացությունը՝ համապատասխան դիտողություններով և բարելավման առաջարկություններով,
- ՄԿԾ-ի փաթեթը իր մեջ ներառում է ՄԿԾ-ի նպատակը, խնդիրները, պրոֆիլը (՝ ներառյալ ուսումնական պլանի քարտեզը, ուսումնառությունից ակնկալվող վերջնարդյունքները, վերջինիս հասնելու համար ընտրված դասավանդման և ուսումնառության մեթոդները, վերջնարդյունքների ձեռքբերումը գնահատող ուսանողի գնահատման մեթոդները, ծրագրի շրջանավարտների կարիերայի և ուսումը շարունակելու հնարավորությունները: Այն իր մեջ պետք է պարունակի նաև համապատասխան ՄԿԾ-ի առարկայական ծրագրային կողմնորոշիչները համաձայն ՀԱԱՀ ԳԽ-ի կողմից հաստատված առարկայական ծրագրերի ուղեցույցի պահանջների:
- Ծրագիրը կազմվում է ըստ ՀԱԱՀ ՄԿԾ-ների համար նախատեսված ձևաչափի:
- Պոտենցիալ գործատուների կարծիքներ:
- ՄԿԾ-ի հաստատման փաստաթղթային փաթեթը կազմվում է ՄԿԾ-ի պատասխանատուի և նրա խմբի կողմից:

## **Ծրագրի առաջարկի ներքին փորձաքննությունը**

Համապատասխան ուսումնական ստորաբաժանումը և ՈԻՄԿ-ը պատասխանատու են ՄԿԾ-ի փաստաթղթային փաթեթը փորձաքննական հանձնաժողովի կողմից դիտարկելուն նախապատրաստելու համար:

ՈԻՄԿ-ն, ՄԿԾ-ի փաստաթղթային փաթեթի համապատասխանությունը ՀԱԱՀ ՄԿԾ փաստաթղթային փաթեթի պահանջներին ստուգելուց հետո, ՄԿԾ-ի հաստատման փաստաթղթերի փաթեթը ներկայացնում է փորձաքննության:

Փորձաքննություն իրականացնելու համար ընտրված հանձնաժողովին տրվում է 6-7 շաբաթ ուսումնասիրելու և եզրակացություն կատարելու համար:

Փորձաքննության հանձնաժողովի անդամների ընտրության, նրանց աշխատանքների կազմակերպման համար պատասխանատու է ՀԱԱՀ Մոթեդ խորհուրդը (ՄԽ):

Հանձնաժողովի ՄԿԾ-ի վերաբերյալ իր եզրակացությունը ներկայացնում է ՄԽ-ի հաստատմանը:

Հանձնաժողովի անդամները, ներառյալ նախագահը, կարող են լինել 6-8 հոգի, նրանցից առնվազն երկուսը պետք է լինեն արտաքին փորձագետներ: Հանձնաժողովի անդամների կազմը ընտրելիս պետք է հաշվի առնել նրանց փորձը, մասնագիտական ոլորտը, փորձագիտական հմտությունները, նրանք պետք է առընչություն պետք է չունենան տվյալ ծրագրի ստեղծման/վերանայման

գործընթացի հետև և այլ գործոններ՝ ՄԿԾ-ի փորձաքննությունը առավելագույն օբյեկտիվ իրականացնելու ակնկալիքով:

Իր փորձաքննության աշխատանքները ավարտելուց հետո հանձնաժողովի հանդիպում է տվյալ ՄԿԾ-ի պատասխանատուի և նրա աշխատանքային խմբի հետ և միասին քննարկում են ՄԿԾ-ի հետ կապված հարցերը, որի ավարտին հանձնաժողովի տալիս է իր եզրակացությունը ՄԿԾ-ի հաստատման կամ մերժման վերաբերյալ:

### **Փորձաքննության զեկույցը**

Փորձաքննության արդյունքը զեկույցն է, որը հանձնաժողովը ներկայացնում է ՄԻՄ-ի հաստատմանը: Ձեկույցը իր մեջ ներառում է փորձաքննության եզրակացությունը, պահանջներ որոնք ենթական են պարտադիր կատարման ուսումնական ստորաբաժանման և ՄԿԾ-ի պատասխանատուի և նրա խմբի կողմից՝ մինչև ծրագրի հաստատումը, ինչպես նաև առաջարկություններ, որոնք պետա իրականացնեն մինչև ծրագրի պաշտոնական մեկնարկը: Ձեկույցը և եզրակացությունը ստորագրվում է փորձագիտական հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

### **Փորձաքննության եզրակացությունների կատարումը և ծրագրի հաստատումը**

ՄԿԾ պատասխանատուն և նրա խումբը պետք է 2 շաբաթվա ընթացքում պատասխան զեկույցը պատրաստել, որտեղ անդրադարձ է կատարվելու փորձագիտական խմբի կողմից առաջ քաշված պահանջներին և առաջարկություններին և ներկայացնել ՀԱՀ ՈԻՄԿ: Վերջինս ուսումնասիրում է զեկույցը և ներկայացնում է այն փորձագիտական խմբին և ՀԱԱՀ ՄԻՄ-ին:

ՀԱԱՀ ՄԻՄ-ն դիտարկում է փորձագիտական հանձնաժողովի եզրակացությունը և զեկույցը և ՄԿԾ-ի պատասխանատուի և նրա խմբի զեկույցը: Եթե ՄԻՄ-ն գտնում է, որ փորձագիտական հանձնաժողովի պահանջները և առաջարկությունները բավարարված են կամ կան բավարար հիմքեր, որ դրանք կբավարարվեն մինչև ծրագրի պաշտոնական մեկնարկը, ապա ծրագիրը երաշխավորվում է ՀԱԱՀ ԳԻՄ-ով հաստատմանը:

Հաստատվելու դեպքում ՄԿԾ-ի հաստատման փաթեթի երկու օրինակ ՄԿԾ-ի մեկնարկից առնվազն 4 ամիս առաջ ներկայացվում է ՈԻՄԿ:

### **Փաստաթղթային հենք՝**

1. Ուղեցույց առարկայական ուսումնական ծարգրերի մշակման
2. Առարկայական ուսումնական ծրագրի կազմման ձևաչափ
3. Կրթական ծրագրի որակի գնահատման քաղաքականություն
4. ՀԱԱՀ ներքին որակի ապահովման ձեռնարկ

# Հավելված 1`

## Նոր կրթական ծրագրերի ստեղծման հայտի ձևաթերթ

1. Ծրագրի ընդհանուր բնութագիրը

Դեպարտամենտ/ֆակուլտետ.....

Ամբիոն.....

Մասնագիտության (մասնագիտացման) անվանումը եւ դասիչը .....

Աշխատանքային խմբի ղեկավարը (պատասխանատուն) .....

Ուսուցման ձևը (առկա, հեռակա, հեռավար, դրսեկային) .....

Շնորհվող որակավորումը (բակալավր, մագիստրոս, հետազոտող).....

2. Ընդունելության ծավալները

Ընդունելության ակնկալվող ծավալը 1-ին տարում.....

Ընդունելության հեռանկարային ծավալը.....

3. Նոր ծրագրի ներմուծման (գոյություն ունեցող ծրագրի վերանայման)

հիմնավորումը

Ամփոփ ներկայացնել նոր կրթական ծրագրի/մասնագիտության ներմուծման անհրաժեշտությունն ու տնտեսական նպատակահարմարությունը, ներկայացնել դրա տեղը համալսարանի գործող ծրագրերի շարքում: Պարզաբանել, թե ծրագրի ներմուծումը որքանով կնպաստի համալսարանի/ստորաբաժանման վարկանիշի բարձրացմանը և որքանով է այն համապատասխանում համալսարանի/ստորաբաժանման առաքելությանն ու ստրատեգիական պլանին:

4. Աշխատաշուկայի վերլուծություն

Ներկայացնել տվյալներ (պոտենցիալ գործատուների, մասնագետների ու շահագրգիռ պաշտոնյաների կարծիքներ, նախորդող կրթական ծրագրերի շրջանավարտների հայտեր, վիճակագրական և առկա այլ նյութեր) առաջարկվող ծրագրի/մասնագիտության ուղղությամբ աշխատաշուկայի պահանջարկի վերաբերյալ:

5. Մրցակցային դիրք

Ներկայացնել ամփոփ տվյալներ Հայաստանի այլ բուհերում իրականացվող նման կրթական ծրագրերի վերաբերյալ և գնահատել առաջարկությունը ներկայացնող համալսարանի/ստորաբաժանման մրցակցային դիրքը (առավելություններ, թերություններ) երկրում (տարածաշրջանում), հիմնավորել, որ առաջարկվող ծրագիրը/մասնագիտությունը նպատակահարմար է (գերադասելի է) իրականացնել հատկապես

համալսարանի տվյալ ստորաբաժանումում: Նշել արտաքին (ազգային, միջազգային) էտալոնային կողմնորոշիչ պահանջները (benchmarks) տվյալ մասնագիտության համար:

6. Ծրագրի նպատակները

Թվարկել ծրագրի ներմուծման նպատակները (տվյալ ոլորտում մասնագետների տեղային, տարածաշրջանային կամ ազգային պահանջարկի բավարարումը, մասնագետների նախապատրաստումը հետագա ուսումնառության ու հետազոտական աշխատանքի համար, նոր մասնագիտության արտադրական կամ սոցիալական ոլորտի

զարգացումը և այլն):

7. Ուսումնառության ելքային արդյունքները

Նշել, թե ուսանողներն ակնկալվող ինչպիսի գիտելիքների, կարողությունների և ձիրքերի կրիրապետեն ծրագրի հաջող ավարտի դեպքում:

8. Ծրագրի կառուցվածքը

Նշել կրթական ծրագրի հիմնական մոդուլները և դասընթացները, դրանց բաշխումն ըստ մոդուլների: Ներկայացնել ուսումնական պլանի ուրվագիծը:

9. Տարբերիչ առանձնահատկությունները

Նշել կրթական ծրագրի առանձնահատկությունները, ուսուցման կամ ուսումնառության նորարարական եղանակները կամ միջոցները, որոնք ծրագրի աշխատանքային խումբը կարևորում է:

10. Ուսումնական պրակտիկան

Նշել ուսանողների արտադրական և նախաավարտական պրակտիկաների անցկացման ժամկետները, ինչպես նաև այն ձեռնարկությունները և կազմակերպությունները, որտեղ հնարավոր է և նպատակահարմար դրանց անցկացումը:

11. Տվյալ մասնագիտությամբ աշխատատեղերի հնարավորությունները

շրջանավարտների համար

Ներկայացնել ծրագրի շրջանավարտների պոտենցիալ աշխատատեղերի և կարիերային աճի հնարավորությունները: Եթե ծրագիրը նախատեսված է՝ բավարարելու տեղային, ազգային կամ միջազգային գործատուների (ձեռնարկությունների, կազմակերպությունների, պետական մարմինների) կոնկրետ պատվերները, այսինքն՝ ներմուծվում է նպատակային ձևով, ապա դա հավաստել համապատասխան փաստաթղթերով:

12. Դասախոսական ռեսուրսները

Հավաստել, որ առաջարկվող ծրագրի իրականացման համար ստորաբաժանում մում/համալսարանում առկա է անհրաժեշտ որակավորումով և թվակազմով դասախոսական անձնակազմ: Ներկայացնել այն դասախոսների տվյալները (CV-ի տեսքով), որոնց մասնակցությունը ծրագրի իրականացմանը երաշխավորվում է:

13. Դասախոսների վերապատրաստման կարիքները

Հիմնավորել առաջարկվող ծրագրի ներդրման համար դասախոսների վերապատրաստման կարիքները (օրինակ՝ նոր դասընթացների, ուսուցման նոր տեխնոլոգիաների, նոր սարքավորումների և տեխնիկական միջոցների յուրացման համար) և հնարավորությունները:

14. Պահանջներ ուսումնական տարածքների և լաբորատոր սարքավորումների վերաբերյալ

Հիմնավորել, որ ծրագրի իրականացման համար ստորաբաժանումում առկա են անհրաժեշտ ուսումնական և օժանդակ տարածքներ, լաբորատոր և գիտակրթական անհրաժեշտ սարքավորումներ կամ դրանք կարող են հատկացվել մինչև ծրագրի սկսվելը:

15. Քոմպյութերային ենթակառուցվածքը և ուսուցման տեխնիկական միջոցները  
Նկարագրել ստորաբաժանումում առկա քոմպյութերային բազան և դասավանդման առաջարկվող տեխնիկական միջոցները, որոնք անհրաժեշտ են ծրագրի իրականացման համար (քոմպյութերային դասարաններ ու

լաբորատորիաներ՝ քումայութերային աջակցությամբ և օնլայն ուսուցմամբ, ինչպես նաև վիրտուալ լաբորատոր աշխատանքների կիրառման հնարավորություններ): Նշել, թե տեխնիկական ինչպիսի լրացուցիչ, ներառյալ քումայութերային միջոցներ կպահանջվեն առաջարկվող ծրագրի ներդրման դեպքում և ինչպես պետք է դրանք ձեռք բերվեն:

16. Գրադարանային և ինֆորմացիոն այլ ռեսուրսներ

Նշել, թե մասնագիտական ինչպիսի գրականություն, ուսումնամեթոդական ու տեղեկատվական նյութեր (տպագիր կամ էլեկտրոնային) են առկա համալսարանի գրադարանում և ինչ նոր նյութեր ձեռք բերելու կամ մշակելու անհրաժեշտություն կա:

Ծրագրի աշխատանքային խմբի ղեկավար.....

Ֆակուլտետի դեկան/դեպարտամենտի վարիչ.....

Հայտը քննարկվել և հավանության է արժանացել ֆակուլտետի խորհրդի/դեպարտամենտի ժողովի կողմից (որոշում թիվ....., ամսաթիվ):

## **Հավելված 2՝ Նոր կրթական ծրագրեր, առարկաներ և մոդուլներ մշակելու և հաստատելու ընթացակարգեր**

Որակավորումների ազգային շրջանակում առկա որակավորումների վերնիցներքն քարտեզագրումը և, հետևաբար, դասընթացի մակարդակում ուսումնառության արդյունքների սահմանումը նպաստում է մասնագիտության կրթական ծրագրի համադրելիությանն ազգային և միջազգային մակարդակներում: Մասնագիտության կրթական ծրագրի մշակումն, իր հերթին, ապահովում է մեկ այլ հարթակկրթական ծառայությունների

որակը սահմանելու, ապահովելու և բարելավելու համար:

Այս առումով, ուսումնական հաստատությունները պետք է երաշխավորեն, որ Համալսարանում գործող ընթացակարգերն արդյունավետ են և համապատասխանում են

կրթական չափորոշիչներին: Հետևաբար, յուրաքանչյուր Համալսարան պետք է սահմանի ՄԿԾ-ի մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, ինչպես նաև առաջնորդվի դրանցով: Այս մոտեցումը նույնպես առաջնորդվում է «պլանավորում-իրականացում-ստուգումբարելավում» սկզբունքով:

ՄԿԾ-ի մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման քաղաքականությունը և ընթացակարգերը մշակելիս, նախ և առաջ, կարևոր է հաշվի առնել՝

- արտաքին հղման աղբյուրները, օրինակ՝ որակավորումների ազգային շրջանակ, կրթական չափորոշիչներ, զբաղմունքների դասակարգիչ, միջազգային համաձայնագրեր և այլ համապատասխան հիմքեր: Եթե երկրում ակտիվ գործում են մասնագիտական և/կամ գործատուների միություններ, ապա երաշխավորվում է նաև նրանց ներգրավվածությունը ՄԿԾ-ի մշակման և որակի ապահովման գործընթացներին՝ ապահովելով ՄԿԾ-ում սահմանված նպատակների համահունչությունը հաստատության առաքելությանը և նպատակներին,
- ուսումնական գործընթացների և համապատասխան ռեսուրսների ռազմավարական պլանավորումը,
- տեղական կամ միջազգային հաստատությունների հետ համատեղ ծրագրերով որակավորումների և այլ կոչումներ շնորհելու պայմանները
- յուրաքանչյուր ՄԿԾ-ի հաստատման և վերանայման գործընթացի ռիսկի հնարավոր գործոնները, ինչպես նաև բոլոր այն ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են ՄԿԾ-ի ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերման համար:

Հաջորդը, շատ կարևոր է հստակ սահմանել ՄԿԾ-ը հաստատող մարմնի (օրգիտ. խորհուրդ) դերը և պարտականությունները, ինչպես նաև այն դեպքերը, երբ ՄԿԾ-ի հաստատման և վերանայման լիազորությունը շնորհվում է մեկ այլ մարմնի: Դերերի և պարտականությունների հստակ բաշխումը կարևոր է որպեսզի այս գործընթացներում ներգրավված անձնակազմը և ուսանողները հստակ պատկերացում ունենան ընթացակարգերի հիերարխիայի մասին և իմանան, թե որ մարմինն է կրում վերջնական պատասխանատվությունը: Դերաբաշխումների գնահատումն անհրաժեշտ է



գործընթացների արդյունավետ իրականացմանը նպաստելու համար: ՄԿԾ-ի մշակման և գնահատման կարևորագույն փուլերում արտաքին փորձագետների ներգրավումը անհրաժեշտ է, քանի որ այն նպաստում է անկողմնակալ և նոր տեսակետների ներառմանը, ինչը նույնպես երաշխավորում է, որ ՄԿԾ-ի կրթական և որակի չափորոշիչները համապատասխանում են նախանշված նպատակներին, ծառայում են նրանց իրականացմանն ու նպաստում թափանցիկությանը: Արտաքին փորձագետների մասնակցությունը հավաստում է որակը տարբեր մակարդակներում՝

- ՄԿԾ-ն իրականացնող անձնակազմին և հաստատությանը, որ ընթացակարգերի

վերաբերյալ կայացված որոշումներն ապահովում են մշտադիտարկման անկողմնակալությունը,

- ուսանողներին,

- արտաքին գնահատողներին:

Կարևոր է, որ արտաքին գնահատողների ներգրավումը ՄԿԾ-ի մշակման և գնահատման գործընթացում կազմակերպվի պատշաճ կերպով, օրինակ՝ ավարտական քննական հանձնաժողովի խորհրդատվությունը ՄԿԾ-ի մշակման և գնահատման գործընթացում կարող է օգտակար լինել անկողմնակալությունն ապահովելու համար, սակայն նրանք չեն կարող մասնակցել ՄԿԾ-ի պաշտոնական հաստատմանը և չեն կարող ներգրավված

լինել վերանայող հանձնաժողովներում: ՄԿԾ-ի մշակման և գնահատման գործընթացում կարող են իրականացվել տարբեր ներդրումներ՝

- Արտաքին խորհրդատվությունը կարող է տրամադրել համապատասխան տեղեկատվություն և ուղղորդում տվյալ ոլորտի վերջին զարգացումների վերաբերյալ,

- Ներքուհական այլ մասնագիտությունների գործընկերների խորհրդատվություն,

- Միջբուհական համաձայնագրերի շրջանակներում տրամադրվող խորհրդատվություն,

- Ներկայիս ուսանողների հետ հետադարձ կապ,

- Շրջանավարտների հետ հետադարձ կապ,

- Մասնագիտական և գործատուների միությունների խորհրդատվություն:

ՄԿԾ-ի մշակման և գնահատման գործընթացներում անհրաժեշտ է հաշվի առնել նաև արտաքին աղբյուրները, ինչը կնպաստի ՄԿԾ-ի զարգացման հնարավոր ուղղությունների բացահայտմանը և որակի ապահովմանը:

Համալսարանի կողմից ՈԱԱԿ-ին ներկայացված հավատարմագրման ենթակա մասնագիտության կրթական ծրագրերը պետք է համապատասխանեն այդ ծրագրերի մշակման ու հաստատման գործընթացի բոլոր պահանջներին և պետք է լինեն համատեղելի որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) հետ: Նոր կրթական ծրագրեր, առարկաներ և մոդուլներ մշակելու և հաստատելու ընթացակարգերը պետք է ներառեն հստակ և համապարփակ գործընթաց, որը վկայում է, որ քննարկվել և նկարագրվել է հետևյալը.

- ծրագրի հայեցակարգը և նպատակները,

- ծրագրի համարժեքությունը հաստատության առաքելությանը և ռազմավարական պլանին,

- ծրագրի խնդիրները, առարկան և մոդուլները,
- ծրագրի, ինչպես նաև յուրաքանչյուր դասընթացի և մոդուլի ակնկալվող կրթական արդյունքները,
- ծրագրի համապատասխանությունը նշված նպատակներին և ակնկալվող կրթական արդյունքներին,
- կատարման եղանակը և ECTS կրեդիտներով արտահայտ-ված բեռնվածությունը,
- կրթական արդյունքներին համարժեք դասավանդման և ուսումնասության մեթոդները,
- կապակցումը հաստատության այլ ծրագրերին,
- ապագա զբաղվածության (աշխատանքի տեղավորման հնարավորու- թյան) խնդիրների հետ կապակցումը,
- ծրագրի կառավարման խնդիրները,
- ծրագրի համարժեքությունը Հայաստանի, Եվրոպական և համաշխար- հային աշխատաշուկաների պահանջներին,
- մարդկային անհրաժեշտ ռեսուրսների ներգրավումը,
- անհրաժեշտ ինֆորմացիոն ռեսուրսները,
- ծրագրի ազդեցությունը Համալսարանի նյութատեխնիկական ենթակառուցվածքների զարգացման վրա,
- անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ներգրավումը,
- այլ Համալսարանների կողմից առաջարկվող համանման կամ հարակից ծրագրերի միջավայրային վերլուծությունը,
- ծրագրի պահանջարկվածությունը սովորողների կողմից, ծրագրի վերաբերյալ համապատասխան շահակիցների և մասնագիտական շրջանակի հետ խորհրդակցությունների անցկացումը, սովորողների արդարացի, հիմնավորված և չափորոշիչներին համապատասխանող գնահատման ներդրված մեխանիզմները,
- Համալսարանի գործունեության դադարեցման դեպքում սովորողների շահերի պաշտպանության մեխանիզմները,
- սովորողների ընդունելության, փոխադրումների և առաջադիմության բավարար մեխանիզմները որակավորումների ազգային շրջանակին համապատասխան դիմալուծի հավելվածը և այդօրինակ այլ փաստաթղթեր: